

Վահե Հակոբյանի այցը Քաջարանի բժշկական կենտրոն

02.06.2014

Մայիսի 30-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանն այցելեց Քաջարանի նորակառույց բժշկական կենտրոն: Մարզպետը այցելեց հիվանդներին , գրուցեց բժիշկների հետ, ինչպես նաև հետաքրքրվեց հիվանդանոցին տրամադրված բուժասարքավորումների կիրառմամբ: Քաջարանի բժշկական կենտրոնի տնօրեն Վարդան Ավագյանը շնորհակալություն հայտնեց ինչպես Սյունիքի մարզպետին, այնպես էլ ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանին` բուժկենտրոնը կառուցելու և նորագույն սարքավորումներով համալրելու համար: Բժշկական կենտրոնի ներկայիս խնդիրն է համալրվել նաև որակյալ մասնագետներով, որպեսզի մատուցեն ախտորոշիչ և բուժիչ լիարժեք ծառայություններ: